# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

**«15» մարտի 2024 թվականի N 59-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի քաղաքի Սևյան փողոց 3-րդ նրբանցք հասցեում գտնվող 161,39 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ երեսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով՝ավտոտնակը, 336,25 (երեք հարյուր երեսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույցը և 2,5 (երկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի (հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30082019-08-0035 վկայական)։

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով, Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գ.Բաբայանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի հոկտեմբերի 25-ին N 19572 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սևյան փողոց 3-րդ նրբանցք հասցեում գտնվող 161,39 (մեկ հարյուր վաթսունմեկ ամբողջ երեսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի, 336,25 (երեք հարյուր երեսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույցի և 2,5 (երկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 1857,85 (մեկ հազար ութ հարյուր հիսունյոթ ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանն ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գ.Բաբայանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

| Կողմ (21) | Դեմ (0) | Ձեռնպահ (2) |
|---|---|---|
| Վ.Սամսոնյան | | Կ.Մալխասյան |
| Գ.Մելիքյան | | Կ. Ասատրյան |
| Լ.Սանոյան | | |
| Մ.Սահակյան | | |
| Տ.Հովհաննիսյան | | |
| Թ.Համբարձումյան | | |
| Ն.Պողոսյան | | |
| Գ.Պասկևիչյան | | |
| Ս.Հովհաննիսյան | | |

Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Ք.Հարությունյան
Ռ.Միքայելյան
Ա.Մաթևոսյան
Ե.Խանամիրյան
Լ.Մուրադյան
Հ.Ստեփանյան
Գ.Մանուկյան
Ս.Ադամյան
Հ.Մարգարյան
Վ.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք.Գյումրի
«15» մարտի, 2024 թվական